Ճանաչի՛ր ինքդ քեզ

# կրթություն

Շաբաթաթերթ «Krtutiun» (education) weekly «Кртутюн» (образование) еженедельник 17.04.2024թ. չորեքշաբթի թիվ 16 (1145)

*«Ակադեմիական քաղաք»*

## Խորհրդակցություն՝ Վարչապետի գլխավորությամբ











Վարչապետ **Նիկոլ Փաշինյանի** գլխավորությամբ՝ տեղի է ունեցել խորհրդակցություն, որի ընթացքում քննարկվել են *«Ակադեմիական քաղաք»*-ի գլխավոր հատակագծին եւ տրանսպորտային ենթակառուցվածքներին վերաբերող հարցեր:

Խորհրդակցությանը մասնակցել են *«Ակադեմիական քաղաք»* հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամները, Ակադեմիական քաղաքի գլխավոր հատակագիծը նախագծող gmp International GmbH Architects and Engineers ընկերության փոխտնօրեն **Թոբիաս Քեյլը,** պատասխանատու գերատեսչությունների ղեկավարներ:

Թոբիաս Քեյլը, ներկայացնելով գլխավոր հատակագիծը, նշել է, որ հիմնական քաղաքներից հեշտությամբ՝ 2 ժամում, կարելի է հասնել Ակադեմիական քաղաք, քանի որ վայրի առումով տեղանքը բավականին լավն է՝ մոտ է եւ՝ օդանավակայանին, եւ՝ Հյուսիս-Հարավ մայրուղուն: Մանրամասներ են ներկայացվել համալսարանների տեղակայման, կացարանների, ճանապարհային ցանցի, լանդշաֆտի վերաբերյալ: Նրա խոսքով, նախագծի մշակման ընթացքում հաշվի է առնվել Թամանյանական նախագիծը՝ դրանով փորձելով կապ հաստատել Երեւանի պատմության հետ: *«Անցած անգամ մենք խոսում էինք «Հայֆիլմ»-ի հետ ինտեգրման մասին: Մենք ունեցել ենք չորս հաջողակ խմբեր, որոնք շատ հետաքրքիր նախագծեր են ներկայացրել, թե ինչպես կարելի է «Հայֆիլմ» ստուդիայի տարածքը վերակենդանացնել: Հուսով եմ, որ կկարողանանք այս գաղափարները բերել Հայաստան»,-* հավելել է GMP միջազգային ընկերության փոխտնօրենը: Թոբիաս Քեյլն ընդգծել է, որ նախագծի շրջանակում ուսումնասիրվում է նաեւ կայունության թեման, որովհետեւ Ակադեմիական քաղաքն ապագայի համար է եւ այն պետք է կենտրոնացած լինի այնպիսի թեմաների վրա, որոնք վերաբերում են ոչ միայն այսօրվան, այլ նաեւ վաղվան:

Վարչապետի խոսքով՝ քաղաքի կոնցեպտի հետ կապված մակրոհարցեր այլեւս չկան եւ պետք է անդրադառնալ հայեցակարգային կետերին. *«Տեսլականի առումով մենք գործնականում պրոցեսի ամեն քայլը, ամեն շարժը տեսել ենք: Հարցեր ունեցել ենք, վերապահումներ չենք ունեցել: Իհարկե, սա այն է, ինչ մենք ուզում ենք»,-* ասել է Նիկոլ Փաշինյանը:

Խորհրդակցության ընթացքում քննարկվել է նաեւ տրանսպորտային եւ ճանապարհային ցանցի, տրանսպորտային այլընտրանքային միջոցների տեխնիկատնտեսական վերլուծության իրականացման ծեւաչափի հարցը, անդրադարձ է կատարվել քաղաքաշինական զարգացման եւ գույքի կառավարման մոդելի մշակման ընթացակարգերի հետ կապված թեմային:

***շարունակությունը՝ էջ 2***

Համո Սահյան - 110

## Վերջին լեռնանցք



Ապրիլի 14-ին Համո Սահյանը դարձավ 110 տարեկան: Այդ առթիվ ներկայացվող հոդվածը նվիրված է Համո Սահյանի հետմահու լույս տեսած *«Ինձ բացակա չդնեք»* (1998) գրքին: Այս ժողովածուում իշխում է հավերժի ճամփորդի հոգեբանությունը: Սահյանի ստեղծագործական կյանքում բանաստեղծ, բնություն, հանրություն եռամիասնությունը այս գրքում որոշակիանում է: Բանաստեղծի դեպքում՝ որպես անձնական ճակատագիր, բնության դեպքում՝ որպես հավերժության ստուգված չափանիշ, հանրության դեպքում՝ որպես կեղծված իրականություն: Համո Սահյանը հասել էր իր վերջին լեռնանցքին, որտեղից քայլ արեց դեպի հավերժություն:

***տե՛ս՝ էջ 6-7***

*«Դասական Եվրատեսիլ»*

## Ընտրվել է հայաստանյան պատվիրակը

*«Արամ Խաչատրյան»* համերգասրահում տեղի է ունեցել *«Դեպի դասական Եվրատեսիլ»* մրցութային համերգի եզրափակիչ փուլը, որի ընթացքում հայտնի է դարձել *«Պատանի երաժիշտների Եվրատեսիլ 2024»* մրցույթի հայաստանյան պատվիրակը:

Միջոցառմանը ներկա են եղել ՀՀ ԿԳՄՍ նախարար **Ժաննա Անդրեասյանը** եւ նախարարի տեղակալ **Դանիել Դանիելյանը:**

ԿԳՄՍ նախարարության հետ համագործակցությամբ Հանրային հեռուստաընկերության կողմից իրականացվող այս նախագծի հայաստանյան փուլն ավարտվել է եզրափակիչ փուլ անցած 10 մասնակցի կատարումներով: Հայաստանի պատվիրակն ընտրվել է հայաստանյան եւ միջազգային ժյուրիի, ինչպեեւ եւս նաեւ հեռուստադիտողի քվեարկությամբ:

***շարունակությունը՝ էջ 3***

Համադպրոցական

## Մասնագիտական կողմնորոշման ամուր հիմք

Գիտական հետազոտությունների նկատմամբ դպրոցահասակների շրջանում հետաքրքրություն սերմանելու, խմբային աշխատանքի, նորարարական ծրագրերի իրականացման եւ դրանց ներկայացման հմտությունները զարգացնելու նպատակով ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության նախաձեռնությամբ արդեն 4-րդ անգամ կազմակերպվում է համադպրոցական գիտության փառատոնը:

Երեւանի պետական համալսարանում տեղի է ունեցել *«Համադպրոցական գիտության փառատոն 2024»* միջոցառման ամփոփիչ փուլը, որին ներկա են եղել ԿԳՄՍ նախարար **Ժաննա Անդրեասյանը,** ԵՊՀ ռեկտոր **Հովհաննես Հովհաննիսյանը:**

***շարունակությունը՝ էջ 5***

Համո ՍԱՀՅԱՆ

### Ինձ բացակա չդնեք...

Ձեր լռությունը զնգում,
Զրնգում է ծորով մեկ,
Ձեր լռության համերգում
Ինձ բացակա չդնեք...
Համբերություն եմ ասում,
Ակնարկներս կրկնեք,
Համբերության հանդեսում
Ինձ բացակա չդնեք...
Ձեր շուրջը ամպ է, կայծակ,
Քնով չանցնեք, չքնեք,
Քնեցիք էլ, արթնացաք,
Ինձ բացակա չդնեք...
Թվում է՝ թե կամենաք,
Մի օր երկինք կթռնեք,
Ձեր թռիչքի ժամանակ
Ինձ բացակա չդնեք...
Ձեր պնդության պատճառով
Դուք աշխարհներ կսնեք,
Իմ մեղմության պատճառով
Ինձ բացակա չդնեք...
Ես եմ՝ քարե պատարագ,
Ձեզնից սերված ընդունեք,
Դուք ձեր կամքին հակառակ՝
Ինձ բացակա չդնեք...
Ոչ խոստումներ, ոչ երդում
Չսպասեք ու չքննեք,
Անվերջ, անշարժ ձեր երթում
Ինձ բացակա չդնեք...

### Գարունդ հայերեն է գալիս

Գարունդ հայերեն է գալիս,
Ձյուներդ հայերեն են լալիս,
Հայերեն են հորդում ջրերդ:
Հավքերդ երգում են հայերեն,
Խոփերդ հերկում են հայերեն,
Հայերեն են տոկում գրերդ:
Արևդ հայերեն է ծագում,
Ծառերդ հայերեն են ծաղկում,
Հայերեն են պայթում բառերդ:
Հունդերդ ծլում են հայերեն,
Ձեռքերդ կռում են հայերեն,
Հայերեն են լռում քարերդ:
Ջրերդ հայերեն են շնչում,
Ջոհերդ հայերեն են ննջում,
Հայերեն են տանջում ցավերդ:
Որքան էլ ձեռից գնացել,
Դու էլի հային ես մնացել,
Հայերեն են հառնում սարերդ:
Թող Աստված եղածը պահի,
Եվ հետո ինչ էլ պատահի,
Ձյուներդ հայերեն են լալու,
Գարունդ հայերեն է գալու,
Հայերեն են գալու դարերդ:



Հայաստան - Ղազախստան

## Երկկողմ համագործակցության նոր ծրագրեր



Ղազախստանի Հանրապետության նախագահի՝ Հայաստանի Հանրապետություն կատարած պաշտոնական այցի շրջանակում ստորագրվել են մի շարք երկկողմ համագործակցության փաստաթղթեր:

Այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար **Ժաննա Անդրեասյանը** եւ Հայաստանում Ղազախստանի Հանրապետության դեսպան **Բոլատ Իմանբաեւը** ստորագրել են *«Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության եւ Ղազախստանի Հանրապետության զբոսաշրջության եւ սպորտի նախարարության միջեւ ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի ոլորտում 2024-2026 թվականների համագործակցության վերաբերյալ»* ծրագիրը:

Ոլորտային երկկողմ փաստաթղթերի վավերացմանը նախորդել է ՀՀ վարչապետ **Նիկոլ Փաշինյանի** եւ Ղազախստանի Հանրապետության նախագահ **Կասիմ-Ժոմարտ Տոկաեւի** միջեւ համատեղ հայտարարության ստորագրումը՝ երկկողմ համագործակցության հետեւողական զարգացման, կատարելագործման եւ բովանդակային համալրման նպատակով:

Ստորագրված համատեղ հայտարարությունում, ի թիվս այլ հարցերի, նշված է նաեւ, որ կողմերը պարտավորվում են համակողմանիորեն նպաստել մշակույթի, գիտության, կրթության ոլորտներում շփումների ընդլայնմանը, աջակցել մշակույթի եւ արվեստի կազմակերպությունների եւ գործիչների, հետազոտական կենտրոնների, ուսումնական հաստատությունների, զանգվածային լրատվության միջոցների միջեւ ուղիղ կապերի հաստատմանը, ինչպես նաեւ կազմակերպել *«Ղազախստանի Հանրապետությունում Հայաստանի օրեր 2024 թ.»* եւ *«Հայաստանի Հանրապետությունում Ղազախստանի մշակույթի օրեր 2025 թ.»* միջոցառումները:

Նախատեսվում է նաեւ աջակցել մշակութային-հումանիտար կապերի զարգացմանը, այդ թվում՝ երկու երկրների տարածքում ապրող էթնիկ խմբերի լեզվական, մշակութային եւ կրոնական ինքնատիպությունը խթանելու միջոցով: Նախատեսվում է ապահովել նրանց լիարժեք մասնակցությունը սոցիալ-քաղաքական, տնտեսական եւ մշակութային կյանքին:

Կողմերը նաեւ դրական են գնահատել Երեւանի պետական համալսարանի Աբայի անվան ղազախական լեզվի, պատմության եւ մշակույթի կենտրոնի գործունեությունը: Երկուստեք ընդգծվել է նաեւ Լ.Ն. Գումիլյովի անվան Եվրասիական ազգային համալսարանում հայոց լեզվի, պատմության եւ մշակույթի ուսումնասիրության եւ տարածման նպատակով մշակութային հարթակի գործարկման կարեւորությունը:

Ղազախստանի Հանրապետության նախագահ Կասիմ-Ժոմարտ Տոկաեւը, ՀՀ ԱԺ նախագահ **Ալեն Սիմոնյանի** եւ ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանի ուղեկցությամբ, այցելել է նաեւ Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, որտեղ վերջինիս են ներկայացվել թանգարանում պահվող հայերեն եւ օտարալեզու, այդ թվում՝ հայատառ ղփչաղերեն հին ձեռագրեր:





## Խորհրդակցություն՝ Վարչապետի գլխավորությամբ

*սկիզբը՝ էջ 1*



Տրանսպորտային ենթակառուցվածքի զարգացման թեմայի հետ կապված՝ վարչապետն անդրադարձել է *«Սասունցի Դավիթ»* կայարանից երկաթուղով դեպի Ակադեմիական քաղաքի հատված կատարած շրջայցին: *«Իմ տպավորությունը, անկեղծ ասեմ, այսօրվա գոնե առաջին հատվածից ես չէի սպասում, որ մենք հիմա կգնանք եւ կես ժամում կհասնենք այնտեղ»*,- նշել է Նիկոլ Փաշինյանը եւ հավելել, որ տրանսպորտային ենթակառուցվածքների ճշգրիտ մոդելավորման համար անհրաժեշտ է մոդելավորել այն միջին վիճակագրական մարդուն, ով մնալու է Ակադեմիական քաղաքում եւ ով ամեն օր գալու է եւ գնա:

Հանդիպմանը քննարկվել են նաեւ այն աշխատանքների շրջանակը, որոնք արդեն իսկ կարելի է մեկնարկել: Նշվել է, որ Ակադեմիական քաղաքի գլխավոր հատակագծի հաստատումից հետո, հաջորդիվ կմեկնարկեն երկաթուղու եւ մշակութային հատվածի նախագծման աշխատանքները:

Քննարկումների արդյունքում՝ վարչապետը համապատասխան հանձնարարականներ է տվել պատասխանատուներին՝ նախագծի իրականացմանն առնչվող տարբեր հարցերի վերաբերյալ:

Դիմորդ - 2024

# Հաստատվել են բուհերի 2024-2025 ուսումնական տարվա ընդունելության տեղերը

ՀՀ կառավարության նիստում հաստատվել են բուհերի 2024-2025 ուստարվա՝ ըստ մասնագիտությունների՝ պետության կողմից ուսանողական նպաստների ձեւով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ եւ վճարովի, առկա ուսուցմամբ բակալավրի ու անընդհատ եւ ինտեգրացված կրթական ծրագրերով ընդունելության տեղերը:

2024-2025 ուստարվա բակալավրի ընդունելության տեղերը նախագծվել են ըստ մասնագիտությունների եւ կրթական ծրագրերի՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության՝ 2021-2026 թթ. ծրագիրը, ինչպես նաեւ հաշվի առնելով կրթական ծրագրերով մասնագիտությունների գերակայությունների վերաբերյալ գերատեսչությունների ներկայացրած առաջարկությունները, դիմելիությունը՝ ըստ բուհերի, նախորդ տարիների ընդունելության արդյունքներն ու տվյալ մասնագիտության համար բուհին տրամադրված լիցենզիայով սահմանված տեղերը:

Մասնավորապես՝ համապատասխան տեղեր են հատկացվել տեղեկատվական տեխնոլոգիաների, տեղեկատվական անվտանգության, ծրագրային ճարտարագիտության, տեղեկատվական համակարգերի, գեոմատիկայի, շինարարական ճարտարագիտության, լոգիստիկայի, ավիացիոն եւ հրթիռային տեխնիկայի, տվյալագիտության, կրթական գիտությունների, մասնագիտական մանկավարժության բնագիտական ուղղվածությամբ կրթական ծրագրերին եւ այլ մասնագիտությունների:

Ընդհանուր առմամբ՝ 2024-2025 ուստարվա՝ պետության կողմից ուսանողական նպաստների ձեւով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ առկա ուսուցմամբ բակալավրի ու անընդհատ եւ ինտեգրացված կրթական ծրագրով ընդունելությանը կհատկացվի 3162 տեղ, որից 2096-ը՝ ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններին:

Նախորդ՝ 2023-2024 ուստարվա բուհերի՝ պետության կողմից ուսման վճարի լրիվ փոխհատուցմամբ ուսուցման ընդունելության համար նախատեսված 2146 տեղերից 1174-ը (ընդհանուր տեղերի թվի 55%) հատկացվել է բնագիտամաթեմատիկական (STEM) ոլորտին, իսկ 2024-2025 ուստարվա համար նախատեսվում է 2096 տեղերից 1264-ը՝ ընդհանուր տեղերի թվի 61%-ը:

Հաշվի առնելով 2023-2024 ընդունելության մրցույթի արդյունքները, հատկապես՝ թափուր մնացած տեղերի վերլուծությունը՝ նախատեսվում է 2024-2025 ուստարվա համար ըստ մասնագիտությունների առկա ուսուցմամբ բակալավրի ու անընդհատ եւ ինտեգրացված կրթական ծրագրերով 14 000 տեղ հատկացնել վճարովի ընդունելությանը: Որոշման համաձայն՝ մեկշաբաթյա ժամկետում ԿԳՄՍ նախարարը կհաստատի բուհերում վճարովի հիմունքներով ուսուցմամբ ընդունելության տեղերը՝ նկատի ունենալով նաեւ բուհերի կողմից ներկայացրած հայտերը եւ տվյալ մասնագիտությանը լիցենզիայով հատկացված տեղերը:

# Ընտրվել է հայաստանյան պատվիրակը

*սկիզբը՝ էջ 1*

Քվեարկության արդյունքներով՝ առաջին հորիզոնականում **Հայկ Հեքեքյանն** է, երկրորդում՝ **Էդուարդ Դայանը,** իսկ երրորդ հորիզոնականը զբաղեցրել է **Լյանա Ուլիխանյանը:**

Եզրափակիչ փուլ անցած 10 մասնակիցների ելույթներն ուղեկցվել են Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի նվագակցությամբ (գեղարվեստական ղեկավար եւ գլխավոր դիրիժոր Սերգեյ Սմբատյան):



ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը, ողջունելով ներկաներին, շնորհակալություն է հայտնել հրաշալի երեկոյի եւ կատարումների համար: *«Առավոտյան ներկա էի համադպրոցական գիտության փառատոնին, որտեղ մեր երեխաների գիտական մտքին եւ նորարար գաղափարներին ծանոթանալու հնարավորություն ունեի: Երեկոյան արդեն պատանի երաժիշտների հրաշալի կատարումներն էի ունկնդրում՝ եւս մեկ անգամ համոզվելով, որ ունենք տաղանդավոր սերունդ: Պետության գլխավոր անելիքը տաղանդների զարգացման համար նպաստավոր պայմաններ եւ միջավայր ստեղծելն է: Նպատակադրել ենք ստեղծել Տաղանդների զարգացման հիմնադրամ, որը տաղանդավոր երեխաների եւ երիտասարդների խրախուսման համար աջակցության նոր հարթակ է լինելու: Համոզված եմ՝ դեռ բազում առիթներ ենք ունենալու մեր հրաշալի կատարողներին լսելու ամենամեծ բեմերից»*,- ասել է Ժաննա Անդրեասյանը:

Նա շնորհակալություն է հայտնել Հանրային հեռուստաընկերությանը դասական երաժշտության միջազգային մրցույթին մասնակցության համար՝ ընդգծելով նման նախաձեռնություններին պետական խրախուսանքի եւ ուշադրության կարեւորությունը: Ժաննա Անդրեասյանը հաջողություն է մաղթել մրցույթի մասնակիցներին, իսկ Հայկ Հեքեքյանին՝ հաղթական վերադարձ:

*«Պատանի երաժիշտների Եվրատեսիլ»* մրցույթին կարող էին մասնակցել 12-21 տարեկան պատանիները, որոնք ունեն ՀՀ քաղաքացիություն կամ վերջին 2 տարիներին մշտապես բնակվել են Հայաստանի Հանրապետությունում:

Մրցույթն անցկացվում է 1982 թվականից՝ երկու տարին մեկ անգամ: Հայաստանը մասնակցել է մեկ անգամ. քանոնահար **Նարեկ Կազազյանը** գրավել է երրորդ տեղը:

Առաջին եւ երկրորդ փուլերում պրոֆեսիոնալ ժյուրին առանձնացրել է լավագույն մասնակիցներին, որոնք կիսաեզրափակիչ եւ եզրափակիչ փուլերում կատարումներով հանդես են եկել Հանրային հեռուստաընկերության եթերում:

*«Պատանի երաժիշտների Եվրատեսիլ 2024»* մրցույթը տեղի կունենա Նորվեգիայում, օգոստոսի 17-ին:







**Համո ՍԱՀՅԱՆ**

## Դու իմ կյանքն էիր, կյանքի գինն էիր

Դու իմ կյանքն էիր, կյանքի գինն էիր,
Լավագույն էիր ամենքի մեջ:
Դու իմ գրկի մեջ ուրիշինն էիր,
Իմն էիր միայն իմ երգի մեջ:

Առաջինն էիր, ու վերջինն էիր
Իմ անքուն, անքեն տարերքի մեջ,
Դու իմ ձեռքի մեջ ուրիշինն էիր,
Իմն էիր միայն իմ վերքի մեջ:

## Օրը մթնեց

Օրը մթնեց, ժամն է արդեն
Իրիկնահացի,
Տխրությունս կամաց-կամաց
Փոխվում է լացի:
Իջնում էին խոհուն, խոնարհ
Դեզերի ուսին
Մի կաթնահունց երկնակամար,
Մի ծերատ լուսին…
Մեկը մեկից ամաչելով,
Եվ զուսպ, եւ հավաք,
Նստում էին մերոնք կարգով՝
Կրտսեր ու ավագ:
Նստում էին եւ սպասում,
Մինչեւ պապը գար,
Մինչեւ բակում Ծաղիկ եզան
Զանգը ծլնգար:
Պապը գալիս, սուփրի գլխին
Նստում էր շուքով,
Եվ լցվում էր տունը դաշտի
Բույր ու շշուկով…
Ու երբ տատս ձեռքն էր առնում
Շերեփը իր հին,
Գդալները բնազդաբար
Աղմկում էին:
Թանապուրի տաք գոլորշին
Գերանին առնում,
Եվ սյունն ի վար գլոր-գլոր
Ուլունք էր դառնում:
Վայելում էր տաք թանապուր,
Լավաշ ու սամիթ
Աշխատավոր մի գերդաստան՝
Պարզ ու միամիտ:
Հիմա այդ մեծ գերդաստանից
Ոչ մեկը չկա…
Ես եմ մնում լոկ իբրեւ հուշ
Եվ իբրեւ վկա:
Օրը մթնեց, ժամն է արդեն
Իրիկնահացի,
Տխրությունս կամաց-կամաց
Փոխվում է լացի:



Կառավարության որոշումով

# Կթվայնացվի տարկետումների տրամադրման գործընթացը

ՀՀ կառավարության որոշմամբ՝ փոփոխություններ են կատարվել *«Նպատակային ուսումնառության համար քաղաքացուն պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալու եւ տրված տարկետումը դադարելու պայմանները սահմանելու մասին»* որոշման մեջ: Փոփոխության ընդունումը պայմանավորված է ՀՀ-ում, ինչպես նաեւ օտարերկրյա պետություններում հանրակրթական կամ նախնական (արհեստագործական) եւ միջին մասնագիտական կրթական ծրագրերով սովորող քաղաքացիների տվյալների տրամադրման գործընթացի կատարելագործմամբ, ինչպես նաեւ ավելորդ վարչարարությունից խուսափելու եւ գործընթացը թվայնացնելու անհրաժեշտությամբ:

Գործող որոշման համաձայն՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարը պարտավոր է Պաշտպանության նախարարություն ներկայացնել Հայաստանում կամ օտարերկրյա պետություններում հանրակրթական, ինչպես նաեւ հիմնական կրթության հիմքի վրա առանց ընդհատման նախնական (արհեստագործական) կամ միջին մասնագիտական կրթական ծրագրերով սովորող այն քաղաքացիների անվանացուցակը, որոնք 18 տարին լրանալու օրվա դրությամբ չեն ավարտել նշյալ ծրագրերով ուսումնառությունը եւ հայտարարված զորակոչի շրջանակում ենթակա են պարտադիր զինվորական ծառայության: ԿԳՄՍ նախարարությունը հարցում է կատարում ուսումնական հաստատություններին ուսումնառությունը չավարտած եւ պարտադիր զինվորական ծառայության զորակոչի ենթակա քաղաքացիների քանակը հստակեցնելու նպատակով, որտեղից ստանում է համապատասխան անվանացուցակներ: ԿԳՄՍՆ-ն ճշգրտում է այդ անվանացանկերը եւ ուղարկում Պաշտպանության նախարարություն, որն էլ իր հերթին դրանք ուղարկում է համապատասխան տարածքային զինվորական կոմիսարիատներ, որոնք քաղաքացիների տարկետումը սահմանված կարգով ձեւակերպում են մինչեւ ուսումնառության ավարտի օրը ներառյալ, սակայն ոչ ավելի, քան քաղաքացու 19 տարին լրանալու օրը:

Ընդունված նոր որոշմամբ՝ գործընթացը կիրականացվի Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի *«Կրթության կառավարման տեղեկատվական համակարգի»* միջոցով: Սահմանվել է, որ ԿՏԱԿ-ը համակարգի ամբողջական տվյալների առկայության վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացնում է ՀՀ պաշտպանության նախարարություն: Տարկետումները տրամադրելու համար հիմք կհանդիսանան նշված համակարգում ուսումնական հաստատությունների կողմից տվյալ հաստատությունում սովորողների մուտքագրված տվյալները: Տարածքային զինվորական կոմիսարիատը համակարգում առկա տվյալների հիման վրա տարկետման ենթակա քաղաքացիների անվանացուցակները եւ ամփոփ տվյալները ներկայացնում է ՀՀ պաշտպանության նախարարություն: Օտարերկրյա պետություններում հանրակրթական, ինչպես նաեւ հիմնական կրթության հիմքի վրա առանց ընդհատման ՄԿՈւ ծրագրերով սովորող, 18 տարին լրանալու օրվա դրությամբ ուսումնառությունը չավարտած եւ պարտադիր զինվորական ծառայության զորակոչի ենթակա քաղաքացիների դիմումների հիման վրա տարկետման հավակնող քաղաքացիների տվյալները ներկայացվում է Պաշտպանության նախարարություն:

Որոշմամբ սահմանվել են նաեւ պարտադիր զինվորական ծառայության զորակոչի ենթակա քաղաքացիների դիմումների ներկայացման ժամկետները եւ այդ ժամկետները խախտելու հետեւանքները: Այսպիսով՝ որոշման արդյունքում հնարավոր կլինի խուսափել ավելորդ վարչարարությունից, կբացառվեն տեխնիկական վրիպակները եւ մարդկային գործոնով պայմանավորված՝ սխալվելու հավանականությունը:

***Հ. Հ.***

# Ուսուցչի հերթական վերապատրաստումը կիրականացվի՝ մասնագիտական զարգացման կարիքին համապատասխան

ՀՀ կառավարության որոշմամբ՝ հանրակրթական ուսումնական հաստատության՝ հերթական ատեստավորման ենթակա ուսուցչի վերապատրաստման կարգում կատարվել են փոփոխություններ:

Վերապատրաստումներն արդյունավետ իրականացնելու նպատակով նախատեսվում է դրանք իրականացնել՝ առավելագույնը չորս մակարդակում արված գնահատումների արդյունքում արձանագրված մասնագիտական զարգացման կարիքից ելնելով: Մասնագիտական զարգացման կարիքի գնահատումն իրականացվում է ուսուցչի եւ տնօրենի կողմից Դպրոցների կառավարման տեղեկատվական համակարգում հարցաթերթիկի միջոցով՝ ինքնաշխատ եղանակով: Ուսուցիչը կիրականացնի ինքնագնահատում, իսկ տնօրենը դասալսումների եւ ներդպրոցական վերահսկողության գործիքների միջոցով կորոշի ուսուցչի մասնագիտական զարգացման կարիքի աստիճանը: Տնօրենի եւ ուսուցչի կողմից կարիքի գնահատման անհամաձայնության դեպքում բարդության համապատասխան մակարդակի վերապատրաստումներին մասնակցելու համար հիմք է ընդունվում տնօրենի կողմից իրականացված՝ տվյալ ուսուցչի մասնագիտական զարգացման կարիքի գնահատումը:

Էլեկտրոնային հարթակում կձեւավորվի ուսուցչի մասնագիտական կարիքի վերաբերյալ տեղեկանք, որով էլ ուսուցիչը կմասնակցի համապատասխան մոդուլով վերապատրաստմանը՝ յուրաքանչյուր մոդուլի համար նշելով համապատասխան մակարդակը: Կարգով կարեւորվել է տնօրենի գնահատումը. այն կապվելու է տնօրենի ատեստավորման հետ՝ հաշվի առնելով, թե աշխատանքային գործունեության ընթացքում իր գնահատած՝ ուսուցչի մասնագիտական կարիքի համապատասխանությունը որքանով է արդարացված եղել եւ համապատասխանել է նաեւ վերապատրաստող կազմակերպության կողմից ուսուցչի մասնագիտական կարիքի ախտորոշիչ թեստավորման արդյունքի, ինչպես նաեւ վերապատրաստումից հետո ատեստավորված ուսուցիչների թվի հետ:

Ուսուցչի մասնագիտական զարգացման կարիքը կարող է գնահատվել նաեւ արտաքին դիտարկման արդյունքում՝ դասալսումների միջոցով, որը կարող է իրականացնել այդ իրավունքն ունեցող որեւէ կառույց (ԿԶՆԱԿ, մենթոր դպրոցներ եւ այլն):

Ուսուցիչն ատեստավորման համար պահանջվող կրեդիտները, իր մոտ բացահայտված մասնագիտական զարգացման կարիքին համապատասխան, կարող է հավաքել ատեստավորման համապատասխան շրջափուլի ընթացքում:

Ուսուցչի մասնագիտական զարգացման շրջափուլերի տեւողությունը՝

*1) 1 տարի է՝ մինչեւ 5 տարվա աշխատանքային փորձ ունեցող ուսուցիչների համար եւ իրականացվում է առաջին տարվա ընթացքում,*

*2) 1 տարի է՝ վերապատրաստման առաջին մակարդակի համար իրականացվող դասընթացների համար, եթե ուսուցիչը վերապատրաստվելու է բարդության տարբեր մակարդակի ծրագրերով եւ իրականացվում է 1-ին ենթակետով սահմանված ժամանակահատվածում, իսկ մյուս մակարդակների համար՝ 3-րդ եւ 4-րդ ենթակետերով սահմանված ժամանակահատվածում,*

*3) 3 տարի է՝ վերապատրաստման երկրորդ բարդության մակարդակի դասընթացների համար եւ իրականացվում է առաջին երեք տարվա ընթացքում՝ յուրաքանչյուր տարվա համար մասնակցելով առնվազն 4 դասընթացի,*

*4) 5 տարի է՝ վերապատրաստման երրորդ եւ չորրորդ բարդության մակարդակի դասընթացների համար՝ յուրաքանչյուր տարվա համար մասնակցելով առնվազն 2 դասընթացի:*

Վերապատրաստումների չափորոշչի եւ ծրագրի հիման վրա վերապատրաստման ծրագրի յուրաքանչյուր բաժնի համար մշակվում է բարդության երեք մակարդակի դասընթաց, որոնք կարող են իրականացվել առկա, էլեկտրոնային, հեռավար եւ համակցված եղանակներով: Կախված ուսուցչի աշխատանքային փորձից՝ տարբերակված է նաեւ վերապատրաստման եղանակը: Սկսնակ ուսուցիչների համար այն կլինի առկա ձեւաչափով, իսկ ավելի մեծ աշխատանքային փորձ ունեցող ուսուցիչների համար այն կարող է իրականացվել հեռավար կամ հիբրիդ ձեւաչափով:

Ուսուցչի մասնագիտական զարգացման կարիքի գնահատման հիման վրա ուսուցիչը յուրաքանչյուր մոդուլից մասնակցում է բարդության համապատասխան մակարդակի վերապատրաստումների.

*1) տարրական մակարդակի կարողունակությունը համապատասխանում է առարկայական գիտելիքի իմացության կարիքին, որի համար ուսուցիչը մասնակցում է վերապատրաստմանը.*

*2) երկրորդ (ձեռնահասության) մակարդակի կարողունակություն ունեցող ուսուցիչը մասնակցում է երրորդ (տիրապետման) մակարդակի վերապատրաստմանը.*

*3) երրորդ (տիրապետման) եւ չորրորդ (փորձագիտական) մակարդակների կարողունակություն ունեցող ուսուցիչները մասնակցում են չորրորդ (փորձագիտական) մակարդակի վերապատրաստմանը.*

*4) առաջին շրջափուլի արդյունքում չորրորդ (փորձագիտական) մակարդակին համապատասխանած ուսուցիչը հաջորդ շրջափուլում չի վերապատրաստվում, մասնագիտական զարգացումն ապահովվում է կրթական ծրագրի բովանդակությանը համապատասխան միջազգային գիտաժողովներին մասնակցության, զեկույցներով հանդես գալու կամ այլ հարթակներում մասնագիտական հոդվածներ հրապարակելու եղանակով՝ պետական միջոցներով կամ համաֆինանսավորմամբ:*

Գործընթացը նկարագրված մեխանիզմով իրականացնելու համար՝ վերանայվել են նաեւ՝ *«Ատեստավորման ենթակա ուսուցչին վերապատրաստող երաշխավորված կազմակերպությունների եւ դասընթացների ցանկի ձեւավորման կարգը»* (https://tinyurl.com/4w3f77cr): Եվ *«Հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատության՝ հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստման չափորոշիչը եւ օրինակելի ծրագիրը հաստատելու մասին»* 1162-Ա/2 հրամանի փոփոխությունը՝ (https://tinyurl.com/42htj2th):



***ՀԵՂԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ***

# Մասնագիտական կողմնորոշման ամուր հիմք

*սկիզբը՝ էջ 1*

Փոքր հողմային էլեկտրակայանից մինչեւ *«խելացի»* աղբամաններ, արբանյակների հետազոտումից մինչեւ այլընտրանքային էներգիայի ստացում, Երեւանի հին ու նոր պատմություններից մինչեւ Գրիգոր Զոհրապի նովելների բեմականացում. փառատոնում ներկայացվել է շուրջ 70 հետազոտական աշխատանք՝ *«Մաթեմատիկա եւ ծրագրավորում»*, *«Ֆիզիկա եւ աստղագիտություն»*, *«Քիմիա»*, *«Կենսաբանություն»*, *«Հասարակական գիտություններ»* անվանակարգերում:

*«Գիտության փառատոնի կազմակերպումը շատ կարեւոր է դպրոցներում գիտության հանրայնացումն ապահովելու առումով: Այստեղ գտնվող երեխաներից յուրաքանչյուրը սկսում է հետազոտել, հետաքրքրվել գիտական հետազոտություններով, պատկերացում կազմում, թե ինչպիսի կարեւոր եւ հետաքրքիր գործընթաց է գիտական եւ հետազոտական աշխատանքը: Նրանց մեծ մասի համար սա դառնում է մասնագիտական կողմնորոշման ամուր հիմք, որովհետեւ իրենց ընտրած թեման ուսումնասիրելով՝ սկսում են պատկերացնել՝ ինչով են ուզում զբաղվել հետագա գործունեության ընթացքում: Փառատոնը էապես ազդում է կրթության որակի վրա. նախագծերի մեծ մասը ներկայացված է բնական գիտությունների այնպիսի ուղղություններով, որոնց որակի բարելավումը կարեւորում ենք ՝ քիմիա, ֆիզիկա, կենսաբանություն: Այսպիսով՝ մեր երեխաները նաեւ դպրոցներում կրթության որակի բարելավման եւս մեկ մեխանիզմ են ստանում»*,- նշել է Ժաննա Անդրեասյանը: Նրա խոսքով՝ ամեն տարի այս փառատոնից դրական տպավորություններ է ստանում, որովհետեւ տեսնում է՝ տարբեր դպրոցների աշակերտներ, իրենց ուսուցիչների գլխավորությամբ, անդրադառնում են արդիական խնդիրների ու նորարար լուծումներ առաջարկում: *«Կարեւոր է, որ մեր երեխաների համար ստեղծենք պայմաններ՝ զարգանալու, կրթվելու, իրենց մտքերն ու գաղափարներն իրականացնելու համար: Կարեւոր եմ համարում, որ մեր երեխաներն անդրադառնում են իրենց համայնքին եւ շրջապատին առնչվող խնդիրներին, ինչը նշանակում է, որ նրանք ուշադիր են, նկատում են առկա պրոբլեմները եւ փորձում են հենց այդ հարցերի լուծումները գտնել գիտության եւ հետազոտության միջոցով, որն էլ մեր կրթական համակարգի բարեփոխումների ամենաուղիղ նպատակն է: Մեր երեխաների գաղափարները ցույց են տալիս, որ հուսալի ապագա ունենք: Նրանք իրենց արժեքային դիրքորոշումներով մեր վաղվա արժանապատիվ եւ ստեղծագործ քաղաքացիներն են, որոնք լուծելու են մեր երկրի խնդիրները»*:

Նախարարը նաեւ համոզմունք է հայտնել, որ ներկայացված գաղափարների շուրջ պետք է շարունակաբար մտածել, քննարկել, փորձարկել եւ դրանք ավելի լուրջ ուսումնասիրության առարկա դարձնել: Ժաննա Անդրեասյանի խոսքով՝ պետությունը շարունակաբար ավելացնում է գիտության ոլորտի հատկացումները. 2018-ի համեմատ՝ դրանք աճել են 280 տոկոսով, եւ եթե կա գաղափար, որի արդյունքը կիրառելի է, պետությունը պատրաստ է աջակցել:

Այս տարի համադպրոցական գիտության փառատոնի կազմակերպչական նորությունն այն է, որ ԿԳՄՍ նախարարին կից աշակերտական խորհրդի անդամները եւս մասնակցում են նախագծերի գնահատմանը՝ հանդես գալով գիտական կազմակերպությունների ներգրավմամբ ստեղծված հանձնաժողովում: *«Շատ կարեւոր է, որ սովորողները գնահատեն սովորողներին: Դա հանրակրթության նոր չափորոշչի գնահատման մեթոդաբանություններից մեկն է, երբ աշակերտը սովորում է գնահատել իր հասակակցի աշխատանքը»*,- փաստել է նախարարը՝ հավելելով, որ փառատոնը կարեւոր է նաեւ միջազգային հարթակներում աշակերտների մասնակցությունը խրախուսելու առումով:

Նախարարը շրջել է տաղավարներով, հետաքրքրվել աշխատանքների մանրամասներով, աշակերտների հետ զրուցել նրանց մասնագիտական կողմնորոշման հարցերով: Նա մասնակիցներին կոչ է արել շարունակել նույն ոգեւորությամբ՝ մաղթելով հաջողություն: Աշակերտները նշել են՝ ամիսներ շարունակ ապրել են իրենց գաղափարների, հետազոտությունների կյանքի կոչմամբ, ոգեւորվել ստացված արդյունքներով:

Հանձնաժողովի անդամներից **Գոռ Մարգարյանի** (ԳԱԱ Արեւելագիտության ինստիտուտ) գնահատմամբ՝ փառատոնը շատ հաջողված է եւ կամրջում է կրթությունն ու գիտությունը՝ ապագայում բուհերում ապահովելով լավ ուսանողների ու հետազոտողների: Նա ընդգծել է հասարակագիտության եւ բնագիտության համադրումը փառատոնի ընթացքում. *«Աշակերտները Գրիգոր Զոհրապի նովելների նկարները ստանալու համար օգտագործել էին արհեստական բանականություն, ինչը երկու ուղղությունների միջեւ ապահովել էր հրաշալի համագործակցություն»:*

Նախարարին կից աշակերտական խորհրդի անդամները եւս շատ ոգեւորված էին իրենց նոր պարտականությամբ: Նրանց հավաստիացմամբ՝ որպես հանձնաժողովի անդամ՝ գնահատելիս առաջնորդվել են անաչառությամբ, ներկայացված գաղափարի նորարարությամբ ու պետության խնդիրների լուծման համար կիրառելիությամբ:

Մասնագիտական հանձնաժողովի գնահատման արդյունքները կիրապարակվեն առաջիկայում: Հայկական համադպրոցական գիտության 4-րդ փառատոնի եզրափակիչ փուլում ՀՀ 30 ուսումնական հաստատությունների անհատական կամ հետազոտական խմբերը ներկայացրել են ուսումնական տարվա ընթացքում գիտական ղեկավարի աջակցությամբ իրականացրած եւ իրենց կողմից առաջադրված գիտահետազոտական նախագծերի արդյունքները:

Գնահատող հանձնաժողովի կողմից ամենաբարձր գնահատականների արժանացած՝ *«Հայկական համադպրոցական գիտության փառատոն-2024»*-ի նախագծերը կներկայացվեն *«Երիտասարդ գիտնականների համար ԵՄ մրցույթ (EUCYS)»*-ին, որը տեղի կունենա Լեհաստանում:





## Գրադարանների եւ գրադարանային գործի մասին

ՀՀ կառավարության նիստում գործադիրը հավանության է արժանացրել *«Գրադարանների եւ գրադարանային գործի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին»* օրենքի նախագծի վերաբերյալ օրենսդրական նախաձեռնությունը, որը սահմանված կարգով կներկայացվի Ազգային ժողով:

Նախագիծը մշակելիս ուսումնասիրվել է *«Գրադարանային միությունների եւ հաստատությունների միջազգային դաշինք»*-ի (IFLA), ինչպես նաեւ Լատվիայի, Էստոնիայի եւ Ռուսաստանի համապատասխան օրենսդրությունը:

Նախագծով սահմանվել են էլեկտրոնային գրադարան, էլեկտրոնային հրատարակություն եւ մշակութային, կրթական, տեղեկատվական կենտրոն (լռֆթ) հասկացությունները:



Բացի այդ՝ օրենքով ամրագրվել է արտերկրի կարեւոր գրադարանների հայագիտական ֆոնդի համալրման պահանջը: Մասնավորապես՝ պետական լիազոր մարմինն ապահովում է արտերկրի գրադարաններում հայկական գրավոր հուշարձանների հաշվառման, ուսումնասիրման աշխատանքները եւ հայագիտական ֆոնդի համալրումը՝ այդ երկրի օրենսդրության, միջազգային իրավունքի սկզբունքների եւ նորմերի շրջանակում: Նշյալ մարմինը նաեւ հաստատում է պետական գրադարանային աշխատողների ատեստավորման կարգը եւ ապահովում հանրային գրադարանների նկատմամբ մշտադիտարկում:

Նախագծով հստակեցվել են նաեւ գրադարանների օգտագործման նպատակները. սահմանվել է, որ դրանք գերազանցապես օգտագործվում են՝ գիտական, կրթական, մշակութային, զբոսաշրջային եւ հանգստի կազմակերպման նպատակներով, ինչպես նաեւ իրենց գործառնական նշանակությամբ:

Նշվել է, որ գրադարանի տարածքի օգտագործումը տնտեսական նպատակներով (հուշանվերների պատրաստում եւ վաճառք, կրթական ծրագրերի իրականացում, գրքերի, պարբերական հրատարակությունների հրատարակում եւ այլ հրատարակչական գործունեություն, հեռուստատեսային ծրագրերի իրականացում, առեւտրային ցուցահանդեսների կազմակերպում եւ այլն) թույլատրվում է մշակույթի բնագավառում լիազոր պետական մարմնի համաձայնությամբ, եթե այն չի հակասում գրադարանի հիմնական գործունեությանը:

Նախագծով պետության կողմից իրականացվող մի շարք ծրագրերի համար սահմանվել է լիազորող նորմ:

Համո Սահյան - 110

# Վերջին լեռնանցք

Ետմահու լույս տեսավ Հ. Սահյանի *«Ինձ բացակա չդնեք»* (1998) ժողովածուն: Գրքի վերնագիրը նախապես եղել է *«Վերջին լեռնանցք»:* Մահից ժամեր առաջ ինքն էլ փոխել ու դրել է վերջնական վերնագիրը: Հոգեվարքի այդ ծանր պահին, երբ, իր խոսքերով ասած, սիրտը պայթում էր, ըստ էության՝ վերջին շնչում, ասել է նաեւ նախատեսվող հատընտիրի վերնագիրը՝ *«Քարե պատարագ»:* Միտքն աշխատում էր, կյանքի շարունակությունը տեսնում էր գրքերի մեջ: Հավերժությունից իր վերցրածը գրքերով հավերժությանն էր վերադարձնում: Եթե հայի Աստվածը քարե էր, ուրեմն նրա մահվան պատարագն էլ պիտի քարե լիներ:

*«Ինձ բացակա չդնեք»* ժողովածուն կարող էր բանաստեղծը տեսնել: Չտեսա՛վ: Ժամանակներն այլ էին: Այն պետք է տպագրեր *«Նաիրի»* հրատարակչությունը: Չտպագրե՛ց: Պիտի տպագրեր *«Անահիտ»* հրատարակչությունը: Չտպագրե՛ց: Մահվան մահիճում անընդհատ հետաքրքրվել է գրքի տպագրությամբ: Չտեսա՛վ: Ուրեմն այդպես պիտի լիներ: Բայց գիրքն այսօր կա՝ շնորհիվ նրա բարեկամների հոգածության:

Հավերժի ճամփորդի հոգեբանություն կա այս գրքում: Ըստ ավանդության՝ փարավոնները ոչ թե մեռնում էին, այլ նրանց հոգիները գնում էին դեպի արեւմուտք, որ տեղափոխություններից հետո նորից ծագեին արեւելքից: Գտնված էր կյանքի հավերժական շարժման շրջապտույտը: Բուրգերը կային, նրանց հոգիները պետք է արեւմուտքից տեղափոխվեին արեւելք եւ վերաբնակվեին հավերժության անմահների տաճարներում:

Կյանքի հավերժական շարժման շրջապտույտը հատկապես իր այս գրքում է՛լ ավելի հստակ ու որոշակի դարձրեց Հ. Սահյանը: Եթե փարավոնների հոգիները գնում էին արեւմուտք, որ արեւելքից ծագեին, Սահյանի հոգին գնում էր մայր բնության գիրկը, որ նրա հետ էլ գարնանը նորոգվեր:

Ահա գիրքը բացող առաջին երկտողը՝ *«Թռավ գնաց».*

*Անտառն իմ մեջ, ես՝ անտառի…*
*առավոտ:*
*Մահվան խորհուրդ: Անմահության*
*համ ու հոտ:*

Ամեն ինչ ասված է այստեղ, մնացածը, ահա, սրա պատկերային անդրադարձներն են ու լրացումները: Այս բանաստեղծությունը նաեւ սյուժե ունի, որ կոչված է բա-ցահայտելու առաջին երկտողի իմաստը. վիրավոր ծիծեռնակն իջնում է բանաստեղծի թեւին եւ փրկություն աղերսում: Բանաստեղծը, տատի հեքիմությունը հիշելով, փրկում է նրան: Հաջորդում է ամփոփիչ երկտողը.

*Թռավ գնաց: Տուն եմ գալիս*
*ես մենակ,*
*Անտառն իմ մեջ՝ մի վիրավոր*
*ծիծեռնակ:*

Այսինքն՝ վիրավոր է մայր բնությունը, որը համայն աշխարհի խորհրդանիշն է, եւ նրա փրկիչը բժիշկ-բանաստեղծն է՝ լեզուն կուլ տված, որ իր կռռոցից (ագռավի զուգահեռով) մարդ չվախենա՝ *«Թռչող ագռավի կտուցի վրա…»:* Ուրեմն՝ մահվան հրաժեշտից առաջ կա ավելի մեծ ցավ. հիվանդ է աշխարհը եւ պետք է բուժել: Հաջորդում են գերիշխող այս առանցքային գաղափարը տարբեր իրադրությունների մեջ որոշակիացնող պատկերներ՝ *«Թող ոչ ոքի չկանչեն».*

*Ինձ խաբեցին ամենուր,*
*Խաբեությամբ խաչեցին:*
*Ձեռքիս խաչբուռը առան*



*Ու վրաս խաչ քաշեցին:*

Բանաստեղծը հայտնվում է խաչված Քրիստոսի կերպարով, իսկ խաչողը խարդախված հանրությունն է.

*— Քոնն է աշխարհն, — ասացին,*
*Տանս քարերը տարան…*
*— Տուն ունեցար՝ տանդ մեջ*
*Բույն կդնի սատանան:*

Այսպես խաբել են, թե՝ քոնն են ծովերն ու օվկիանոսները. *«Ի՞նչ է աղոթքն աղբյուրիդ, Որ խոնարհվում ես այդքան…»:* Եվ այս ամենը մեկ նպատակով՝ մարդուն օտարել իր բնաշխարհից, իր տուն ու տեղից եւ, ի վերջո, ինքն իրենից. *«Եվ մտքերիս մեջ հանկարծ Կասկածանքներ ծլեցին… Գլխի ընկա, որ արդեն Ինձ էլ ինձնից խլեցին»:* Սա մի ամբողջ գաղափարական վարչակարգի պատկերն է, որի մեջ անցավ Սահյանի ու նրա սերնդի կյանքը, եւ ահա վերջին շնչին վրա հասած ազատությունը հնա-րավորություն է տալիս լիարժեք ասելու խոսքը՝ որպես իր իսկ ճակատագրի ամփոփում. *«Չիմացա, թե ով եմ ես Ու որտեղից եմ գալիս, Ում կամքով եմ ծիծաղում Եվ ում վրա եմ լալիս<…> Հեռանում եմ աշխարհից՝ Աշխարհից բան չիմացած: Թող ոչ ոքի չկանչեն ճանապարհներն իմ անցած»:*

Այսպես արդեն իսկ ձեւավորված գլխավոր խորհրդանշան–հերոսները՝ Բանաստեղծ–Բնություն–Հանրություն, որոշակիանում են իրենց կյանքով, բանաստեղծի դեպքում՝ որպես անձնական ճակատագիր, բնության դեպքում՝ որպես հավերժության ստուգված չափանիշ, հանրության դեպքում՝ որպես անկատար ժամանակ, խարդախված միջավայր ու կեղծված իրականություն:

Բանաստեղծը ծերացող կյանքի խորհրդանշանի՝ սպիտակ գույնի մեջ է՝ *«Ձյուն է գալիս».*

*Մի սպիտակ բախտ է հսկում*
*Անշարժ երթը սար ու քարիս:*
*Ձյունի վրա ամպ է նստում,*
*Ամպի վրա ձյուն է գալիս:*

Վերջին երկու տողը վերածվում են կրկներգի եւ պատկերի իմաստային հարաշարժությամբ ստանում այսպիսի տեսք. *«Սառցի վրա ամպ է նստում, Ամպի վրա ձյուն է գալիս: <…> Մեղքի վրա ամպ է նստում, Ամպի վրա ձյուն գալիս: <…> Չայնի վրա ամպ է նստում, Ամպի վրա ձյուն է գալիս»:* Վերջին քառատողն ավարտվում է կրկնակի փոխաբերությամբ եւ կրկներգի իմաստային խոր բովանդակությամբ.

*Հոգնած, մաշված օրը մրսում*
*Եվ թիկնում է պատուհանիս…*
*Սրտիս վրա ամպ է նստում,*
*Ամպի վրա ձյուն է գալիս:*

Ամեն ինչի մեջ բանաստեղծը փորձում է տեսնել իր ներկայությունը: Կյանքի ամբողջությունը ճյուղավորվում, մաս–մաս բացահայտում է իր բովանդակությունը, որ-պեսզի հետո վերստին հավաքվի ու ամբողջանա որպես տրամաբանական եզրահանգում՝ *«Մի օր…».*

*Մի օր հուղարկավոր,*
*Մի օր հարսանքավոր,*
*Մի օր ջրվոր էի:*

*Մի օր մի պարզ աղբյուր,*
*Մի օր ջրվեժ փրփուր,*
*Մի օր ջրհոր էի:*

*Մի օր կտրիճ սարվոր,*
*Մի օր հոգնած սայլվոր,*
*Մի օր կալվոր էի:*

Այս ամենն ասվում է, որպեսզի վերջում ինքն իրեն վերստին ճանաչի եւ արդեն, առանց պատկերների, պարզ ու հստակ ասի. մարդի՛կ, եթե այդ ամենով *«Ձեզ հարկավոր էի, Խաղը հաշվենք շահած. Ուրեմն այս աշխարհում Ես բախտավոր էի»:*

Մարդկանց նվիրվել եւ հետո կասկածների մեջ ծվատվել՝ այս է բանաստեղծի ու հանրության հարաբերությունը, բայց թումանյանական վերաբերմունքով՝ *«Ինչքան դավ եմ տեսել ես<…> վատը լավ եմ տեսել ես»:* Սկիզբը սա է. *«Մարդիկ, ձեզ շատ հավատացի… Թեկուզ խաբված հազար անգամ»:* Հետո նորից նույնը.

*Մարդիկ, ձեզ շատ հավատացի,*
*Բայց ստերի այս սեւ դարում*
*Հավատացողն ի՞նչ է շահում.*
*Շատ–շատ մի բախտ հալածվածի:*

Այս ամենը գիտենալով՝ ինքն իր տեսակը չկորցնելու համար բանաստեղծն ստիպված իրեն միամիտ մանկան պես է պահում, որ վերջնականապես հավատը չկորչի: Սա հաշտության եզրն է՝ ներքին խռովությունը քողարկելու համար:

Պարույր Սեւակը պատռեց այդ իրականության դիմակը, հաշտությունը չկայացավ, եւ ի՛նքը զոհ գնաց: Զոհը միշտ էլ անհատն է, ո՛չ թե քաղքենիացված ճահիճի վերածված հանրույթը: Վերջինս խժռում, կուլ է տալիս իր միջից բարձրացած անհատներին եւ պահպանում ճահիճի իր իրավունքները:

Սահյանը գիտեր այդ ճահիճն էլ, ճահիճի օրենքն էլ, բայց նաեւ գիտեր իր ապրելու կերպը՝ արտաքուստ լուռ ու աննկատ, որ ուշադրություն չգրավեր, բայց իր գործը աներ: Նաեւ արտաքուստ ոչ թե փետող ու դատափետող, այլ որպես թռչող հավք, որպես արեւի շող կամ ծառի տերեւ: Այս անընդհատական փոխաձեւությունը միմիայն այն բանի համար է, որ մարդը կյանքից դուրս չմղվի, դուրս չմնա, չդառնա ուղեկից, չվերածվի մոռացված իրի, այլ ապրի իր ժամանակը՝ ոչ թե նրանից լույս հայցելով, այլ իր լույսը նրան տալով: Դարձյալ թումանյանական հայացք կյանքին: Թումանյանական ավանդույթը նախ եւ առաջ սա է՝ ի՞նչ հայացքով ես նայում կյանքին, ի՞նչ ես վերցնում եւ ի՞նչ ես տալիս: Եվ ապա արտահայտման կերպը, որ երկու դեպքում էլ նույն բնաշխարհիկ պատկերամտածողությունն է ու լեզվամտածողությունը: Որպես Հ. Սահյանի կողմից այդ հայացքի բնորոշ օրինակներ վկայակոչենք այս տողերը. *«Աստծո զուլալ արտասուքով Լվացվեցին իմ վերքերը, Ի չիք դարձան խուլ շշուկով Խոստովանած իմ մեղքերը»* (*«Ինձ կանչեցին…»*), *«Եվ հիմա էլ ես ինձ առած, Առել ու ձեզ եմ մատուցում՝ Առաջվա պես արհամարհած Ամեն մի վարձ ու հատուցում»* (*«Ես էն գլխից ձեզ եմ տրվել»*), *«Ախ, ճշմարտություն, Ժամապահն եմ քո, Ստի հետ մերվել Չեմ կարողանում»* (*«Ախ, ճշմարտություն»*), *«Ապրեցի, կյանք չտեսա, Տեսածս գեհեն էր մթին… Ամեն մի քայլը պատիժ, Ամեն ինչ խառն էր ու խրթին, Ճիշտը մեր խորքում պահած՝ Ամենուր ծափ տվինք ստին…»* (*«Ապրեցի…»*):

Այս է կյանքը, այս է իրականությունը, եւ սա՛ է այդ կյանքի ու իրականության բանաստեղծը: Ինչպես պարզ երեւաց, ամեն ինչ բնավ էլ այնքան հարթ չէ, որքան կարող է թվալ, որովհետեւ բանաստեղծն ինքն իրեն կարող է նվիրել, տալ իր լույսն ու ջերմու-թյունը, միայն թե չխառնեն իր *«խղճի անթեղը»* եւ չմտնեն իր *«մաշկի տակ»*, քանզի՝ *«Ես դրանից շատ եմ հոգնել Եվ չեմ կարող էլ ինձ օգնել»* (*«Ես էն գլխից…»*): Այս ամենով հանդերձ, ինչն, ի վերջո, ժամանակի կողմից դաժանորեն խոցված ինքնությունն է, վերստին խորանում ու հաղթող է դառնում թումանյանական աշխարհընկալումը՝ *«Ու եղավ ստի…».*

*Ու եղավ ստի հրավառություն,*
*Ու խաբեության հարսանիք եղավ…*
*Ու կյանքս եղավ*
*անվերջ դառնություն,*
*Եվ արվեստիս տունն*
*անտանիք եղավ:*

*Սուրբս լիրբ եղավ, Աստվածս՝ մռայլ,*
*Հրճվանքս՝ շինծու, տքնանքս՝ ձրի…*
*Ախ, իմ ժողովուրդ, քո այնքան շռայլ*
*Տվածից քեզ ի՞նչ վերադարձրի:*

*Էլ հոգնած հոգիս ինչպես դիմանա…*
*Կանցնեն տարիներ, եւ ո՞վ կիմանա,*
*Թե քանի «Պատրանք»,*
*քանի «Փարվանա»,*
*«Ասպետական»*
*ու «Բինգյոլ» կորցրի…*

*Քո երկնքի տակ հազար աչքանի*
*Ինձ միք խոստանա*
*հետմահու փառքեր,*
*Եթե ներես ու գտնես արժանի,*
*Իրավունք տուր ինձ*
*քո հողում պառկել:*

*«Ինչքա՜ն ծաղիկ պիտի բուսներ, որ չըբուսավ էս հողին… Ի՜նչ պատասխան պիտի ես տամ հող ու ծաղիկ տըվողին»,* — Թումանյանի այս տողերի անդրադարձն են վերոհիշյալ տողերը:

Օր ծերության Հ. Սահյանին դժվար ժամանակներ բաժին ընկան: Ե՛վ օրհնեց նոր մարդկանց ու նոր կյանքը, ե՛ւ հիասթափվեց ու վիրավորվեց խաբված մանկան նման՝ *«Եվ ինչ մնաց մեզ».*

*Եկան… Տիրացան ու ավերեցին,*
*Իրենց մեղքերը մեզ չներեցին…*
*…Եվ ի՞նչ մնաց մեզ…*
*մրսած մեղկություն,*
*Շապիկը հանած օձի մերկություն…*
*Թող կեցցեն այս նոր*
*նորին մեծություն*
*Վերին պարոնայք Քաջնազարները:*

Վերստին Քաջ Նազարը, վերստին Թումանյանի հայացքի անդրադարձը: Հաջորդում է ավելի խիստ մի դատաստան՝ ինքնադատաստանի ձեւով՝ *«Աղոթեմ».*

*Ինձ համար ամեն ինչ կորած է,*
*Էլ ոչ ոք եւ ոչինչ ես չունեմ:*
*Ծամում եմ իմ բաժին չոր հացը,*
*Եվ քունս չի տանում, որ քնեմ:*

*…Փոխվել են դերերն ու տեղերը,*
*Բայց նույնն է երախը վիշապի…*
*Սրա՞նք են այս երկրի տերերը,*
*Աղոթեմ, որ մահս շտապի…*

***շարունակությունը էջ 7***

# Վերջին լեռնանցք

*սկիզբը՝ էջ 6*

Այս տրամադրությունն է՛լ ավելի է թանձրանում *«Գնանք օտարի դռները բախենք, Թերմացքներ մուրանք, որ սովը քաղե՞նք...»* սկսվածքով բանաստեղծության մեջ, որը շարունակվում է այս տողերով. *«Ավելի լավ չէ՞, որ մեզ ազգովի Այս անկախության պարանով կախենք...»:*

Այս ամենին ուղեկցում է քննական մի սթափ հայացք. *«Ծանր ու կորստաբեր տարի ենք անցկացրել: Ավերված է մեր երկիրը, ավերված ենք մենք, ավերված են մեր հոգին, մեր հավատը, մեր երազները... <...> Ասում են անդունդի եզրին ենք, կատարյալ անդունդի... Ուր է թե: Իմ կարծիքով՝ արդեն խորքում ենք: Հատակին»* (Հ. Սահյան, Նոր ենք կյանքում. — *«Գրական թերթ»,* 1993, թիվ 1, 1 հունվար:): Բայց զարմանալի մի ուժ այստեղ էլ նրան ոչ թե անեծքի է մղում, այլ լավատեսության, փրկության հույսի: Նորի՛ց թումանյանական հայացք իրականությանը: Այո՛, նորի՛ց ու մշտապես:

Հանրային կյանքի այս վայրիվերումների մեջ ապրելը դժվար է. քաղաքականացված կյանքն ապականում է մարդկային ամեն մի հարաբերություն եւ ամեն ինչ բեւեռացնում՝ կա՛մ յուրային, կա՛մ թշնամի: Արժեքները վերանում են, մնում են միմիայն պահին ու դիրքին հարմարեցված հարաբերությունները: Ըստ այդմ էլ՝ փոխվում են մարդկային կապերը: Ամեն ոք դառնում է ծրագրված, որ, անկախ ամեն ինչից, նախապես արդեն գիտի, թե ինչ պիտի անի, ում հետ ինչպես վարվի: Մարդն այդ իրականության մեջ աստիճանաբար օտարվում է ինքն իրենից, իր շրջապատից, իր նախկին կապերից: Փոխվում է կյանքը, ավելի վայրագ ու դաժան ձեւեր ընդունում, փոխվում է նաեւ մարդը. եթե մինչ այդ նա քողարկված էր, ապա հիմա դառնում է բացահայտ գայլ, եթե մինչ այդ պահպանում էր հանրային կյանքի քաղքակրթության պարզ վարվեցողությունը, ապա հիմա պարտադրում է իրենը՝ բութ, մութ, տգետ, ցածր, անճաշակ, պատահական, սուտ, սո՜ւտ, սո՜ւո՜ւտ:

Ի՞նչ պիտի աներ Հ. Սահյանն այս դեպքում. իրեն վերստին նորոգելու եւ վերագտնելու համար նա պիտի վեր կենար եւ տարիների իր փորձին վստահ նորից գնար մայր բնության գիրկը: Թումանյանը կասեր.

*Տիեզերքում աստվածային*
*մի ճամփորդ է իմ հոգին.*
*Երկրից անցվոր, երկրի փառքին*
*անհաղորդ է իմ հոգին.*
*Հեռացել է ու վերացել*
*մինչ աստղերը հեռավոր,*
*Վար մնացած մարդու համար*
*արդեն խորթ է իմ հոգին:*

Թումանյանը կկրկներ՝

*Արեւելքի եդեմներին*
*իջավ պայծառ իրիկուն,*
*Հեքիաթական պալատներում*
*ըսպասում են իմ հոգուն.*
*Ի՜նչ եմ շինում էս ցեխերում,*
*աղմուկի մեջ վայրենի...*
*Ա՜խ, թե նորից գըտնեմ ճամփան*
*դեպի էնտե՜ղ, դեպի տո՜ւն...*

Իսկ Հ. Սահյանն ասես նույն տեղից կշարունակեր՝ *«Արդեն շատ եմ հոգնել...».*

*Արդեն շատ եմ հոգնել*
*դահլիճներից փարթամ,*
*Քարոզներից տարտամ ու վեճերից:*
*Գնամ քարափներիս*
*լռությունը կարդամ,*
*Վերջին անգամ փորձեմ ճանաչել ինձ:*

Սա արդեն ո՜րերորդ գնալն է. հաշիվը պահելու համար նորից պիտի ամեն ինչ սկսել *«Որոտանի եզերքին»*–ից, այսինքն՝ ամենասկզբից: Ուրեմն՝ վերստին վերադարձ: Այսինքն՝ այս կյանք ասածն, ըստ բանաստեղծի, հարափոփոխ շարժում է մի բեւեռից մյուսը, հանրային կյանքից՝ բնություն, բնությունից՝ հանրային կյանք: Կարելի է այս ամենն ընդհանրացնել որպես բանաստեղծի հիմնական ասելիք եւ բոլոր գրքերի մեջ առկա այս տրամադրությունները միավորել: Կարելի՛ է: Բայցեւ կորուստն ակնհայտ կլինի, որովհետեւ նույն մոտիվը պահպանելով գրքից գիրք՝ փոխվում է բանաստեղծի տարիքը, ուրեմն՝ նաեւ կենսափորձը: Եվ ամենեւին էլ բանաստեղծի վերադարձի փիլիսոփայությունը նույնը չէ կյանքի սկզբին, կյանքի կեսօրին եւ կյանքի մայրամուտին:

Պատկերները նույնն են, բայց տարբեր է վերաբերմունքը: Նույն Տատնա գետակն է, նույն Գյազբելը, նույն բնաշխարհը: Աշխարհը չի փոխվում, փոխվում է մարդը: Ահա նույն աշխարհը՝ *«Տատնա գետակը».*

*Գլխի չես ընկնի՝ ծիծա՞ղ է համակ,*
*Թե՞ լաց ու կոծ է Տատնա գետակը:*
*Ձգույշ, ցրտությամբ շուրթերդ չայրի,*
*Կրակ ու բոց է Տատնա գետակը:*

Ահա եւ ինքը՝ *«Ես ու գիշերն ենք մենակ, Մեկ էլ իմ հույսն ավերակ...»* (*«Զիերս»*):

Բնությունից կտրվելն իր կյանքը չապրելու կամ ապրածը կրճատելու պես է: *«Այս տարի Գյազբելս չտեսա Եվ չառա հոտը Գյազբելիս...»,* — խոստովանում է բանաստեղծը եւ ամփոփում. *«Կենսագիր, թե միտքս կռահես, Այս տարին իմ կյանքից կհանես»* (*«Այս տարի...»*): Ծննդավայրից կամ բնաշխարհից բացակա պահերին միտքն ու հոգին կենդանի են պահում հողի ոգին: Ուրվագծվում են շարժման մեջ դիտված–լուսավորված, հիմա արդեն գեղանկարի փոխված պատկերներ՝ *«Չկաք», «Փլվեց ու գնաց», «Մի հնար ճարեք»:* Ահա վերջինը.

*Արթնացեք, հուշեր, մի հնար ճարեք,*
*Ազատեք այսքան հոգսից ու ցավից,*
*Իմ այս երկնաքեր*
*ցուրտ քարանձավից*
*Ինձ Տատնա սարի փեշերը տարեք:*

Բայց մշտական վեճը չի մոռացվում, բնության մեջ *«Փուշը զինված է, ծաղիկն՝ անզեն»* (*«Ինչ էլ որ լինի»*), իսկ դա նշանակում է. *«Որ անգամ իմ այս ծաղկած հողում Ծաղկի տիտղոսը փուշն է կրում»:* Այս միտքն ընդհանրանալով դառնում է այսպիսի պատկեր. *«Երթերի, հերթերի մեջ Կմեռնեմ մարդու կարոտից»* (*«Խլագա...»*): Հաջորդում են այլ պատկերներ. *«Շներն ասում են իրենց նախահոր Շանորդությունն են ժառանգել միայն: <...> Շունը տիրոջը շան տեղ չի դնում Եվ տերը նրան միշտ պարտք է մնում»* (*«Տարիքն իմ»*): Ահա այս ամենն են հասունացնում հանրային կյանքից փախչել–փրկվելու գաղափարները: Ո՞ւր մնաս, ինչո՞ւ մնաս: *«Գլուխս առնեմ ու կորչեմ այս քաղաքից՝ Ապստամբյալ անզորների քանակից <...> Ծիածանի լացով հոգիս լվանամ, Բեւեռներս իրար բերեմ, լրանամ»* (*«Գլուխս առնեմ...»*), *«Ուզում եմ կորչել, չքվել հավիտյան <...> Այս համատարած մտքի երաշտից»* (*«Ուզում եմ...»*):

